

Դրամաշնորհային հաշվետվություն N 3

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	«Տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ»
Դրամաշնորհի N	Լոտ 1. Երևան - Աջափնյակ և Դավթաշեն
Դրամաշնորհատու կազմակերպություն	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Դրամաշնորհառու կազմակերպություն	«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն
Ծրագրի իրականացման ժամանակահատված	01.01.-31.12.2022թթ.
Հաշվետու ժամանակահատված	01.07.2022 - 30.09.2022թթ.
Ներկայացման օր	05.10.2022թ.
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	Մարգարիտ Հովհաննիսյան սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող

2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալական աջակցության տրամադրում,
- հոգեբանական աջակցության տրամադրում,
- իրավական աջակցության տրամադրում,
- բժշկական օգնության տրամադրում,
- խաղեր, հեռուստադիտում,
- խմբակներ,
- մշակութային միջոցառումներ, հանդիպումներ և էքսկուրսիաներ,
- տաք ճաշի տրամադրում,
- բաղնիքի ծառայության տրամադրման կազմակերպում:

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

- Սոցիալական աջակցության տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողի կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է թվով 71 կարիքի գնահատում և վերագնահատում: Սոցիալական աշխատողի կողմից կենտրոնում իրականացված ընդունելությունների, անհրաժեշտության դեպքում նաև տունայցերի միջոցով անհատական և խմբային աշխատանքների արդյունքում մասնագիտական աջակցություն է տրամադրվել թվով 71 շահառուի՝ ներառյալ սոցիալական աշխատողի կողմից 9 դեպքի վարման իրականացում.
 - ✓ «Ընտանեկան նպաստ» համակարգում վերափաստագրման իրականացում,
 - ✓ հաշմանդամության կարգի ժամկետի երկարաձգում,
 - ✓ աչքի անվճար վիրահատության կազմակերպում,
 - ✓ վնասված վերջույթի անվճար վիրահատության կազմակերպում,

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 5 ուղեկցում, 13 միջամտություն/միջնորդում այլ կառույցներ: Յուրաքանչյուր ամիս 4 շահառուի համար սոցիալական աշխատողը ձեռք է բերում անապահովության միավորի մասին տեղեկանք՝ անվճար բուժսպասարկումից օգտվելու համար: Սոցիալական աշխատողի աջակցությամբ 2 քաղաքացի ձեռք է բերել ցերեկային կենտրոնի ծառայություններից օգտվելու ուղեգիր:

- Հոգեբանական աջակցության շրջանակում թվով 14 շահառուի տրամադրվել է անհատական հոգեբանական խորհրդատվություն, կազմակերպվել են նաև հոգեբանի հետ թվով 15 խմբային հանդիպումներ 23 շահառուի մասնակցությամբ՝ միտված շահառուների հոգեբանական կայուն վիճակի պահպանմանը, սթրեսակայունության ձևավորմանը, պահպանմանը, առաջացած ճգնաժամերի հաղթահարմանը և/կամ մեղմացմանը:

- Իրավական աջակցության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների մասին, մասնավորապես տեղեկատվություն հայցադիմումների, դիմումների, բողոքների և իրավաբանական բնույթի այլ գործընթացների վերաբերյալ:
- Բժշկական օգնության տրամադրման շրջանակներում բուժքրոջ կողմից իրականացվել է թվով 71 շահառուի ընդունելության կազմակերպում, որից 13 շահառուի ուղղորդում բժշկական այլ հաստատություններ: Բժշկական աջակցության շրջանակներում շարունակաբար իրականացվում է շահառուների առողջական վիճակին հետևում, առողջ ապրելակերպի խթանում շահառուների շրջանում: Բուժքրոջ կողմից կազմակերպվել է տեղամասային պոլիկլինիկայից անվճար դեղորայքի ստացման գործընթացը 4 շահառուի համար:
- Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնում կազմակերպվել է շահառուների ժամանցը՝ ուսուցողական, հիշողության ամրապնդմանն ու ակտիվացմանն ուղղված խաղերի, վարժությունների, ընթերցանության, հեռուստադիտումների և դրանց համապատասխան քննարկումների իրականացման միջոցով:
- Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 5 խմբակ, որին մասնակցել է 26 շահառու: Ստորև ներկայացվում են գործող խմբակները.
 - ✓ Ինտելեկտուալ խաղեր,
 - ✓ Ձեռքի աշխատանքներ,
 - ✓ Առողջ ապրելակերպ,
 - ✓ Կար,
 - ✓ Հոգեբանի անկյուն:
- Կազմակերպվել է թվով 9 մշակութային միջոցառում, որոնց մասնակցել է թվով 38 շահառու: Մշակութային միջոցառումներն են՝
 - ✓ Միջոցառում նվիրված «Սուրբ խաչ» եկեղեցական տոնին,
 - ✓ Տարեդարձների նշում,
 - ✓ Մասնակցություն Օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի Ա.Խաչատրյանին համերգասրահում կազմակերպված համերգային ծրագրին՝ Ս. Ռախմանինովի դաշնամուրի թիվ 2 կոնցերտին,
 - ✓ Մասնակցություն Առնո Բաբաջանյան համերգասրահում Հայաստանի ազգային նվագարանների պետական նվագախմբի համերգին,
 - ✓ Մասնակցություն Օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի Ա.Խաչատրյանին համերգասրահում կազմակերպված Պենդերեցկու անվան ժամանակակից դասականների փառատոնի փակման արարողությանը:
 - ✓ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում շահառուները մասնակցել են վաստակավոր կոլեկտիվ Հայաստանի պարի պետական անսամբլի մենահամերգին,
 - ✓ Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը շահառուները մասնակցել են Հայաստանի պետական կամերային նվագախմբի համերգային ծրագրին,
 - ✓ Հանդիպում քահանայի հետ,
 - ✓ Էքսկուրսիա դեպի Սևանա լիճ, այցելություններ դեպի վանքեր ու եկեղեցիներ:
- Կենտրոնում շահառուներին շաբաթական 5 օր տրամադրվել է տաք ճաշ, սուրճ, թեյ, միրգ և քաղցրավենիք:

- Հաշվետու ժամանակահատվածում թվով 4 շահառու օգտվել է բաղնիքի ծառայության տրամադրումից:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

Հաշվետու ժամանակահատվածում Աջափնյակի ցերեկային կենտրոնի ֆեյսբուքյան էջում տեղադրված նյութերից.

- առաջինը ներկայացնում է դեպի Սևանա լիճ կատարված էքսկուրսիայից նկարներ (տե՛ս հետևյալ հղումով՝ <https://www.facebook.com/photo/?fbid=183170767524415&set=pcb.183171040857721/www.facebook.com/105484788626347/photos/a.183093744198784/183093730865452/>),
- երկրորդը ներկայացնում է կենտրոնի առօրյան նկարագրող նկարներ (տե՛ս հետևյալ հղումով՝ <https://www.facebook.com/photo/?fbid=172985185209640&set=pcb.172985415209617>),
- երրորդ հղումով կարելի է տեսնել Սուրբ Խաչի տոնին նվիրված միջոցառումը (տե՛ս հետևյալ հղումով՝ <https://www.facebook.com/photo/?fbid=188617676979724&set=pcb.188619330312892>),
- չորրորդում՝ նկարներ տարեդարձից (տե՛ս հետևյալ հղումով՝ <https://www.facebook.com/photo/?fbid=179997307841761&set=pcb.179997431175082>):
- հինգերորդում՝ նկարներ ձեռքի աշխատանքի խմբակից (տե՛ս հետևյալ հղումով՝ <https://www.facebook.com/photo?fbid=187056617135830&set=pcb.187056730469152>):

2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում խնդիրը, որին բախվել է Աջափնյակի ցերեկային կենտրոնի թիմը՝ դա դիմող շահառուների ուղեգրման, բժշկական քարտի լրացման ընթացքում առաջ եկած բարդություններն են:

2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալական աջակցության տրամադրում,
- հոգեբանական աջակցության տրամադրում,
- իրավական աջակցության տրամադրում,
- բժշկական օգնության տրամադրում,
- խաղեր, հեռուստադիտում,

- խմբակներ,
- մշակութային միջոցառումներ, հանդիպումներ և էքսկուրսիաներ,
- տաք ճաշի տրամադրում,
- Ըստ անհրաժեշտության բաղնիքի ծառայության տրամադրման կազմակերպում:

2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

Ծրագրի նպատակին հասնելու համար աշխատակազմի հմտություններն ավելի զարգացնելու նպատակով Աջափնյակ և Դավթաշեն համայնքը սպասարկող թիմը մասնակցել է.

- «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ կենտրոնական գրասենյակի կողմից կազմակերպած ժողով-հանդիպմանը, որի ժամանակ քննարկվել են բժշկական ծառայություններն արդյունավետ դարձնելու հետ կապված հարցեր:
- ՀՀ Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարության Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի կողմից կազմակերպած «Սոցիալական աշխատանք տարեցների հետ» լրացուցիչ կրթական ծրագրով նախատեսված վերապատրաստման և որակավորման բարձրացման եռօրյա դասընթացին, որի արդյունքում ձեռք են բերվել գիտելիքներ և հմտություններ տարեցների հետ աշխատանքն ավելի արդյունավետ դարձնելու համար:
- Հոգեբույժի հետ հանդիպում-քննարկմանը՝ շահառուների մոտ հոգեկան առողջության հնարավոր խնդիրների առկայության հավանականությունը քննարկելու նպատակով:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ
Նախարարության գլխավոր քարտուղար՝	Նախագահ՝
<div style="display: flex; justify-content: space-between; align-items: center;"> <div style="border-top: 1px solid black; width: 250px; margin-bottom: 5px;"></div> <div>Ս.Մուրադյան Կ. Տ.</div> </div> <div style="display: flex; justify-content: space-between; align-items: center;"> <div>(ստորագրություն)</div> <div></div> </div>	<div style="display: flex; justify-content: space-between; align-items: center;"> <div style="border-top: 1px solid black; width: 250px; margin-bottom: 5px;"></div> <div>Ե.Մխիթարյան Կ. Տ.</div> </div> <div style="display: flex; justify-content: space-between; align-items: center;"> <div>(ստորագրություն)</div> <div></div> </div>